



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material







1999.1.11



Արմանակ առ առ

**ՎԱՀԵՐԱԳԻՐՔ**

ԽՆԴԻՐ

Հայեր Մահմետ

**ՎԱՀԵՐԱԳԻՐՔ**

**ԽՆԴԻՐ**

Ազգազիւ ԵԿԱՄՏԻ

ՀԱՅՐԱԿԱՆ  
ՀԱՅՈՒԹ  
ՀԵՂԱԿԱՆ ՀԱՅՈՒԹ

Արմագանչ աշեխ  
ՎԱՀԵԲԱԳԻՐՔ  
ԽՆԴԻՐ  
ԱԶԳԱՅԻՆ ԵԿԱՄՏԻ

ՀՀՀ





2\$. 223

4219-40

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

ԱՌ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐք  
ՀԱՅՐ ԵՒ ԱՌ ԱՆԴԱՄՍ ԿԵԴՐՈՆ ԱԿԱՆ  
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

---

Ճշմարիտ ազգասէր անձինք միշտ  
ըսած են և ըսին, մանաւանդ այս վերջե  
օրերս, թէ Սահմանադրութիւնը Վղու  
բարեկարգելու չնպաստեր, եթէ նոյն իսկ  
Սահմանադրութեան պարունակած յօդ-  
ուածներէն սպասուած օդտիցը միջոցնե-  
րուն վրայ չխորհուի և ըստ այնմ ձեռ-  
նարկութեան չսկսուի :

Եյս դիտողութիւնը ընող խմբին մէջ  
հարկաւ կան այնպիսի անձինք ևս, որք  
Վղդին վիճակը լաւ ճանաչելով, կիսով և ափ  
յուսահատեալ, ուղղած են իրենց աչքը  
նախ ժողովրդեան և ապա Ա արչութեան  
բռնելեք ընթացիցը վրայ, դիտելու հա-

մար թէ ի՞նչ ելք պիտի ունենայ այս վիշտակը որ Սահմանադրեալ անունը ժառանգեց ։ Դիտելու համար թէ Հայոց ազգը (հակառակ ոմանց անհերքելի կարծեաց) պատրաստութիւն ունի<sup>՝</sup>, կամ թէ պիտի դիտնայ վայելել Սահմանադրութեան շընորհը, հետևաբար պիտի կարենայ իրեն ընտրածներուն թիկունք և օգնական լինել, զօրացնել զանոնք, յարգել և պառել ։ միով բանիւ, Սահմանադրեալ Ազգի մը պէս իրաւասէր, օրինապահ, առաքինի և հաւատարիմ պիտի լինի<sup>՝</sup> և պիտի մնայ այնպէս ։ Դիտելու համար նոյնպէս նաև թէ Անդրոնական Վարչութիւնը, Ազգին բնաւորութեանը և արդի վիճակին համար, ամենահարկաւոր պիտոյիցը վրայ ըստ կարի հոգ տանելով, ամենակարեւոր և առաջին համարուած, խնդիրներն հետրզհետէ լուծելու, ձեւակերպելու և տրնօրինելու պիտի աշխատի<sup>՝</sup>։

Ահա ասոնք են ոմանց, ընդ որս գուցէ ժողովրդեան մեծագոյն մասին դիտած և սպասած իրաւացի և ամենափափուկ կէտերը ։

Բայց մի<sup>՝</sup>թէ հարկ է սպասել, որ ժողովուրդն ինքնիրմէ խելք ընէ ու որ և

իցէ կարեւոր և օդտակար խնդրոյ մը վռայ  
մասձելով (եթէ գիտէ) վճիռ մի տայ և  
որոշէ բազմութեամբ ելնել ու ներկայա-  
ցրնել զայն առ Արքութիւն։ Եւ կամ  
նոյնպէս մի՞թէ սպասելու է որ Արքու-  
թիւնն ալ իւր ունենալիք անհամար գոր-  
ծոցն ու զբաղանացը մէջ ամեն բան դարձ-  
եալ ինքը մտածէ։ աս ըսել է, ամեն մաս  
ինքինքին հոգալ։ բայց աշխարհիս մէջ  
այսպիսի անկարեկից սկզբունքով ազգա-  
յին գործ առաջ չերթար։

Ա ան զի, քանի որ ժողովուրդը՝  
մանաւանդ այ ժողովուրդն (ըստ կարծ-  
եաց բազմաց) անսովոր, մանաւանդ ան-  
պատրաստ է իւր պարտուցն ու իրաւան-  
ցը նախանձախնդիր լինելու, չկրնար և  
կարողութիւն չունի ինքիրմէ որ և իցէ  
ճանբայ մը մտածելու, որով կարենայ դար-  
ման ևս ճարել իւր առաջին պիտոյիցն ու  
կարօտութեանցը համար։ Այնպէս, քա-  
նի որ Արքութիւնն ամեն բան տնօրի-  
նելու ծանր պաշտօնն ունի, անոր աւելի  
ծանրութիւն տալն ուրիշ բան չէ, եթէ  
ոչ փոթորիկին ատենը նաւն աւելի բեռ-  
նաւորել, և կամ ամենայն իրաց ելիցը  
ճանբանելն աւրշտըկել։

Եւսակայն, Ազգն ալ իւր առաջին  
պիտոյիցը կարօտ է։ Անոր համար ամեն  
կարողութիւն ունեցող անհատի սրբազն  
պարտքն է։ Ազգին բազմաթիւ պիտոյիցը  
վրայ իւր կարողութեանը չափ մտածել,  
և խնդրոյն ձեւակերպութիւն մը տալով  
ներկայացընել զայն առ Արքութիւն,  
որում պատկանի քննելի ու տնօրինելը։

Այս է ահա մերնուաստութեանն ալ  
սրբազն պարտքն առ սիրելին մեր Ազգ,  
և առ մեծապատիւ Անդամն Աեղրոնական  
վարչութեան, որ իբրև անհատ, եւ<sup>թէ</sup>  
ոչ նայ, գոնէ իրաւունք ունիմք (կար-  
ծեօք) աղաչելու՝ ունկնդիր լինել մեր  
տանէ և ընելէ+ խնդիրներէն առաջնոյն, որ զայ-  
ու միւսներուն պէս ազգային եկամուտ  
ճարելու գեղեցիկ միջոց և միանգամայն ազ-  
գին զարգացմանը խիստ նպաստաւոր հա-  
մարած եմք։

Ի՞նչ են արդարեւ Սահմանադրու-  
թիւն, Վրուէարկութիւն, Երեսվոխա-  
նութիւն, Ազգային Արօնական և Վա-  
ղաքական ժողովք, և դարձեալ, Ազգա-  
յին Պւստմնական, Տնտեսական, Պա-  
տաստանական և այլն, և այլն Խորհուրդք  
և Հոգաբարձութիւնք։ Ի՞նչ նշանա-

կութիւն ունին ասոնք և ի՞նչ նպատակ .  
հարկաւ պարծենալու կամթէ այլ և այլ  
Ազգաց կապկութիւն ընելու և կամժա-  
մանակ անցընելու համար ըլլալու չեն այս  
բաները . եթէ ոչ՝ ասոնց ամենքն ալ ըստ  
ինքեան արժանաւորութիւն մը չպիտի ու-  
նենան և հետեւաբար ծաղրելի նիւթեր  
պիտի ըլլան ամենուն .

Սակայն ասոնց ամենն ալ սոսուգիւ-  
իրենց նշանակութիւնն ու նպատակը պիտի  
ունենան . ուստի և անհոգութենէ ,  
անգործունէութենէ և անձեռնարկութե-  
նէ ուրիշ բան մը չպիտի կենայ , որ ասոնց՝  
այսինքն Սահմանադրութեան ամբողջու-  
թիւնը չպիտու և ծաղրելի ընէ . Անշուշտ  
ասոնց ամենուն առանձին առանձին նպա-  
տակն ՚ի մի նպատակ պիտի ծառայեն , այն  
է , զարդարութեան ընդհանուր Աղիքն Հայոց : Ուրեմն  
զարդանալու նպատակաւ Սահմանադրու-  
թող Ազգին ու անոր ընտրեալներուն ա-  
պահին և անխուսելի պարտքն է զարդա-  
ցումն պատճառող կամ զարդացման պա-  
հանջելիք առաջին և հարկեցուցիչ նիւ-  
թին վրայ մտածել , և ոչ միայն մտածել ,  
այլ և ձևակերպել և տնօրինել զայն . այն  
է Դրամական եկամուտ կամ կազմակեր-

պութիւն և մատակարարութիւն գանձի  
միոյ որ պատկանի ընդհանուր Աղջին չա-  
յոց Տաճկաստանի :

Ամեն մարդ գիտէ այն աշխարհածա-  
նօթ իշխանին ըսածը, թէ ամենայն իլաց  
համար երից առաջին պիտոյից մին, երկ-  
րորդն ու երրորդը՝ դրամ, դրամեւ դարձ-  
եալ դրամն է :

Այս առածանման սկզբունքը մեր Աղ-  
ջին ալ անծանօթ չէ . հետեւաբար այս  
հարկեցուցիչ նիւթը դարերէ ՚ի վերչու-  
նենալուն համար . չկայ այնպիսի աղղային  
օդուտ մը կամ նպատակ մը, յորմէ զըր-  
կուած չըլլայ . Օ արմանալու չէ, զի մըշ-  
տընջենաւոր զըկանք կրող Աղջին մէկ ոտ-  
քը աղքատանոցի դրանը սեմոց վրայէն աս-  
դին չդար, և առժամանակեայ նուերներն  
ու գումարները չեն կրնար վերջմը տալ  
այս կացութեան, որ անգութ աղքատու-  
թեան ճանկերուն մէջ ընկած է : Ահա  
այս վիճակին մէջ անցուցած է մեր Աղջն  
ալ այն դառնադառն դարերը՝ որ սկիզբն  
եղած են իւր անկմանն, ու մասամբ իւրիք  
վերջն իւր դանդաղութեան, ուր հաստա-  
տուն և մշտնջենաւոր եկամուտներ չկրնալ  
ունենալուն պատճառաւ, զուրկ բարու-

յական և նիւթական օգուտներէ , օրքան զօր տկարանալով՝ մտածելու անգամ կարողութիւնը չէ մնացեր թէ ի՞նչպէս կամ ո՞րպիսի կերպիւ կրնայ եկամուտ միշոց մը ճարելու . և այսպէս զգացումն ևս կորուսանելով , սովորեր է գոհանալ իւր վիճակին վրայ մինչև ցարդ :

Ծայց այժմ որ նոր զգացումու նոր դար ունեցայ ըստ այս Աղջը , պարտի նաև նոր զգացման հետ խելք ու աշխուժութութիւն ևս ունենալ , ձգելով այն յիմարութիւններն ու դանդաղութիւնն ալետին ձգած դարերուն մէջ . եթէ ոչ ամենայն ինչ ընդունայն է . և Սահմանադրութեան հետ բոլոր Ժողովները , Խորհուրդներն ու Հոգաբարձութիւններն ալիրենց պարծանքէն ուրիշ բան մը չունին և չեն կրնար ունենալ :

Ըսինք թէ մեր Աղջն երից առաջին պիտոյից մինը չը ճարած ըլլալուն համար , մեծամեծ օգուտներէ զրկուեր , և հետեւաբար աղքատանալով Աղջային անուամբ տուրք վճարելու սովորութիւննալ դարերէ ՚ի վեր մոռացեր է : Ի՞նչ ընելու է ուրեմն . ձգելու է զինքը իւր առաջին վիճակին մէջ . քա՛ւ լիցի , և բիւր անգամ

քա՛ւ . վասն զի մեք որ այժմ այս Սահմանադրական վիճակին մէջ մտանք , Սահմագրաբար չվարուիլն ուրիշքան չէ , եթէ ոչ կործանումն . բայց ի՞նչպէս կործանումն . — անկանգնելի և անդարմանելի կործանումն : Բացատրենք ուրեմն այս կործանումը և տեսնենք թէ ստուգիւ մեր կարծածին պէ՞ս է , թէ չափազանցութիւն կայ ըսածնուս մէջ :

Բնական է որ մեր ազգն ալ ուրիշ հպատակ ազգաց պէս իրեն կրօնական արտօնութիւնները ժամանակ առ ժամանակ իւր վեհապետէն պահանջելով , հետզհետէ դիզած է իրարու վրայ , ինչպէս որ յայտնի է տրուած ֆերմաներէն : Այս կրօնական արտօնութիւնները (Սահմանադրութիւնն ալ իրեն ամեն յօդուածներով կրօնական շրջանէն դուրս չեներ , և անոր մէջ քաղաքական խնդիր մը նշմարողն Ապէլի փաշայէն աւելի խելացի պիտի համարուի . մեր բաժինին համար այդ բանը չենք կրնար ընդունիլ ) , այս կրօնական արտօնութիւններն , ըսինք , առնելուն կամ խնդրելուն կերպն ի՞նչ էր . որո՞նք էին ասոնք . ի՞նչ բանի վրայ հիմնուած էր այս խնդրելուն կերպը : Ահա այս տեղ է

խնդրոյն ամենափափուկ կողմը որ զմեզ  
անդի Սահմանադրական կրնայ կարծեցը  
նել անոնց՝ որոնք մեր յօդուածոյն մինչև  
վերջը չպիտի կարդան :

Դարձրագոյն Պարան հետ Հայոց ազ-  
գին ունեցած պաշտօնական առնչութեան  
կերպն ամենելին փոխուած չտեսնուիլ  
Սահմանադրութեան մէջ . Ազգին ներկա-  
յացուցիչն ու կայսերական հրամանաց գոր-  
ծադրութեան միջնորդը դարձեալ Պատ-  
րիարքն է , և այն՝ դարձեալ Եկեղեցա-  
կան դասէն ընտրուած , ինչպէս (բացա-  
ռութիւնը մէկդի) սովորութիւնէր 'ի վա-  
ղուց անտի : Աւրեմն էսէ համաձաւ էսէ նոտ : Ի՞նչ  
հասկրցանք ասկէ : Ատենով Տէրութեան ,  
Բ . Պարան և փաշաներու հետ առնչու-  
թիւն ունեցող անձինք , իբր Վարչու-  
թեան անդամք , Ազգային օդտակար խըն-  
դիրներն իրենց մէջ լուծելին յետոյ՝ դար-  
ձեալ Պատրիարքարանին կողմանէ (երբե-  
մըն ալ առանց անոր տեղեկութեան) գա-  
ցած , դռներն ինկած , ու իրենց հասա-  
կէն վեր ֆերմանեալ արտօնութիւններ խլած  
ու Պատրիարքարան բերած են , յուրա-  
խութիւն և 'ի ցնծութիւն ընդհանուր  
Ազգին : Եւ ի՞նչպէս , — Մեծամեծ զո-

հերով և գրեթէ երբեմն ալ իրենց մահն  
աչք առնելով։ Այս տեղս չենք կրնար  
լուլթեամբ անցընել, և մեր սրբազան  
պարտքն է շնորհակալ լինել և երախտա-  
պարտ մնալ այն ազգասէր անձանց, որք  
այժմ չկան, և անոնց՝ որք այժմ կան,  
Բայց չշեղինք մեր խնդիրէն և շարունա-  
կենք։

Յայտնի է որ մեծասուն Ամիրանե-  
րէն ոմանք, որք իրենց ազգին զարգաց-  
մանն ստուգիւ փափաքող էին, չեին կրօ-  
նար առանց մեծամեծ գժուարութեանց  
ընդունիլ այն արտօնութիւնները, որոց  
Ազգն ալ խիստ կարոտ էր։—Ի՞նչպէս էր  
ասոնց խնդրելուն կերպն՝ ըստնք վերը։ Հա-  
զար ու մէկ տեսակ կուրսուիլ, բիւր ան-  
գամ պաղատիլ, Այսեր և անոր պաշ-  
տօնատարներուն համար Ազգին ըրած ա-  
ղօթքն ու օրհնութիւնները, անոր երախ-  
տագիտութիւնն ու հաւատարմութիւնն  
անդադար յիշել, և վերջապէս գառնա-  
նըման մերձենալով՝ ՚ի գութ շարժել ըզ-  
պաշտօնատարն և ընդունիլ՝ ՚ի նմանէ այն-  
պիսի արտօնագիր, որ առիւծ մը չէր կրո-  
նար վայելել զայն։

Այս էր ահա այն ազգասէր մեծա-

տանց ընթացքն ու ներկայանալնուն կերպը . Եյսու ամենայնիւ Բարձրագոյն Պարսկան և Եզդին միջնորդն այս անձինքչեն , և Պատրիարքն էր դարձեալ այն արտօնագիրներն ընդունողը :

Դրաւ է որ այս անձինք պաշտօնական կերպիւ չելն ճանչուած , բայց ասոնք ալ իրենց առառածեռնութիւնն ու արւեստակութիւնն (Էնդրիկ) ունեին . և եթէ այժմեան Արքութեան վրայէն պաշտօնականը վերցընելով մնացորդ կազմութեանը վրայ միայն նայինք , հիներուն առառածեռնութիւնը (որ հարստութեան պառզի էր) այժմեան քուետուփին հետպիտի կշռենք , և անոնց արուեստակութիւնը՝ խնդրոց վրայ եղած վիճաբանութեանց հետ Եյս վերջինը թէ և աւելի շնորքով ու տրամաբանական է , բայց և այնպէս եթէ Սահմանադրութենէն ընդունելիք շնորհացը վրայ անփոյթ մնայ այժմեան Արքութիւնը , չպիտի կարենանք ասոր համար ալ եսէ համար եսէ նաև ըսել , վասն զի մերաչքին երևցած կործանումը անկանգնելի է , ինչպէս որ վերն ալ ըսինք , և ահաւասիկ ինչպէս :

**Տերութեան ու Եզդին յարաբերու-**

թեան միջնորդութիւնը Սահմանադրու-  
 թեան մէջ զետեղուեցաւ . Սահմանադ-  
 րութիւնը Ա արչութիւն մը ունեցաւ որ  
 ամեն դործ պիտի տեսնայ . Ա արչութիւ-  
 նըն ալ իւր երեսփոխանն ընտրեց , որ մի-  
 անգամայն Պատրիարք Հոգևոր և միջնորդ  
 է Դրան և Եղբին մէջ . ասիկա պաշտօն  
 մ' ալ ունի որ հին Պատրիարքները չու-  
 նէին . այն է՝ պաշտպան և հաւատարիմ  
 կենալ Սահմանադրութեան , և անոր ա-  
 մեն մէկ յօդուածներուն ու բառերուն :  
 Աս ըսել է որ Բարձրագոյն Դուռը դար-  
 ձեալ իւր հին միջնորդը պաշտօնական կեր-  
 պիւ ճանչելէն յետոյ , պաշտօն մըն ալ ա-  
 ւելցուցած է անոր որ իւր վաւերացու-  
 ցած Սահմանադրութեանը վօայ հսկէ ,  
 անոր հաւատարիմ մնայ և իւր միջնոր-  
 դութեան սահմանը անով չափէ : Աս ա-  
 զեկ բան : — Հապա այն Դրանը կրած  
 գլխացաւութիւնները : — Անոնք վերջա-  
 ցան : — Ուրեմն աղգին մէջէն անհատմը  
 արտօնութիւն չունի Եղբային որ և իցէ  
 պիտոյից համար Բ . Դրան կամ առան-  
 ձին Պատրիարքին դիմելու : — Աչ . կեդ-  
 րոնական Ա արչութեան միայն դիմելու  
 է , վասն զի անոր յանձնուած է . պոդ իշ-

խանութիւնը ո՞չ միայն քուէիւ , այլ Բ  
Դրան կողմանէ պաշտօնական կերպիւ ևս  
— ապա Վ արչութիւնն անփոյթ ըլլայ  
և իւր պաշտօնն ըստ արժանւոյն չկատա-  
րէ նէ : — Եյն առենը կործանում :

Եյս է մեր վերի յիշածին , այսինքն  
Սահմանադրական վիճակին մէջ մտնելէն  
յետոյ Սահմանադրաբար չվարուելուն հե-  
տեւութիւնը , զոր անկանգնելի և անդար-  
մանելի կործանումն կոչեցինք և ուղեցինք  
բացատրել : Աւստի դառնանք այժմ մեր  
խնդրոյն , որ էր Եզր իւր առաջին վի-  
ճակին մէջ չձգել ՚ի մասին վճարման տր-  
րոց , որոյ վարժութիւնն ալ ըսինք մո-  
ռացեր է դարերէ ՚ի վեր :

Խնչպէս որ ըսինք , քա՛ւ լիցի մեզ  
ձգել զԵզգն իւր առաջին վիճակին մէջ .  
մեր սրբազան պարտքն է այս ամենակարե-  
ւոր խնդրոյս վրայ այն կերպիւ մտածել  
ու դարմանը դանել , որ Եզրն ալ իւր  
պիտոյքէն ոչ զըկուի , և ոչ այն պիտոյքը  
լեցընելու համար ժողովրդեան դժկամու-  
թիւն մը պատճառէ . ուստի և այնպիսի  
ընթացք մըն ալ պէտք է բռնել , որ Եզ-  
րին կարօտութիւնը ոչ միայն ինքն իրմէ  
և սիրով լրանայ , այլ և պատուաւոր և ա-

ռաքինի միջոց մը ես լինի այն մեր Ազգն  
ալ ուրիշ բարեկիրթ Ազգաց կարգը մըտ-  
ցընելու . և արդարեւ Ազգ մը՝ որ Սահմա-  
նագրական անունն առաջ է իւր վրան ,  
կարելի չէ միանգամայն այնպիսի հակա-  
ռակ ընթացքի մէջ կենալ , առանց ան-  
բարեկիրթ անունն իր վրայ առնելու , և  
մեր Ազգայնութեան թշնամեաց , այսինքն  
Ամերիկացի քարոզչաց նամակագրութիւն-  
ներն ալ իրօք հաստատելու :

Աղէկ որ մեր ժողովուրդն ալ ուրա-  
խութեան և տրտմութեան պատճառաւ  
արտասուք հանողաչքի նմանութիւն ու-  
նի , գէթ ’ի մասին բարեպաշտական տրոց .  
այս ալ մասնաւոր յատկութեանցը մէկն է  
և մեծ ապացոյց նորա վեհանձնութեանն ,  
առատաձեռնութեանն , ու առաքինու-  
թեանը :

Այս ամենապատռական յատկու-  
թեան երկուորեակ շնորհը , յուսանք թէ  
պիտի վայելէ Ազգին ընդհանրութիւնը ,  
շնորհիւ ձեռնառութեան պատկառելի  
Արշութեան , նկատելով որ նպաստաւոր  
յատկութիւն մ’է միանգամայն Ազգային  
եկամուտի և բարեկրթութեան նորա , և  
միայն այս երկու նիւթոց վերաբերութիւն

ունի մեր ընելիք քանի մը առաջարկու.  
թեանց առաջինն ալ (ինչպէս որ վերը յիշեցինք), որ ըստ երեքտասաներորդ յօդ-  
ուածոյ Աահմանագրութեան ալ ապօ-  
րինաւոր պէտք չէ համարուիլ:

**Եւ որովհետեւ յիշուած է հոն Աւ-**  
գայնոց ժաղափական Հեմակադրութեան այսինքն, ծննդեան, ա-  
մուսնութեան և վախճանման վերաբերեալ արշանագրութեանց  
խնդիրները, կրնանք սոցա յարել նաև  
այն՝ որ մեր առաջարկութեան մէջ՝ ոչ  
միայն առաջին և սրբազան պարտքելնիս  
համարած եմք, այլ և Եւրոպիոյ ամեն  
ազգաց մէջ ալ ամենահարկաւոր խնդիր  
մըն է 'ի վաղուց անտի, որ մեք ևս իբրև  
քրիստոնեայ, չեմք կրնար 'ի մոռացօնս առ-  
նել զայն, այն է արձանագրութիւն ևս  
և վկայական վասն մկրտութեան մանկան:

**Խրաւ է որ Աահմանագրութեան մէջ**  
այս խնդիրը յիշուելէն յետոյ, նշանակ-  
ուած է նաև թէ ազգային Պիւանատան  
մէջ ազգահամարի զրասենեակ մըն ա-  
պիտի ըլլայ, ուր Ազգայնոց քաղաքական  
վիճակագրութիւնը պիտի արձանագրուի,  
և հետեւաբար ժողովրդեան համար հարկ  
եղած վաւերական թղթերն անկէ պիտի  
տրտին ըստ պահանջման. բայց այս խրնդ-

լոյն վրայով մասնաւոր և ընդարձակ մատակարարութիւն մը , որուն Ազգն ամենայն մասամբ կարօտ է , չնշմարուիր հոն . չնշմարուիր անոր մէջ նաև այն՝ որ ամեն մարդ իւր ծննդեան և այլն վկայագրերն իր քովս ունենայ , որոնք քրիստոնեայ և բարեկիրթ ժողովրդեան մը փորձաքարերն են .

Ուստի մեր ընելիք առաջարկութիւնը՝ որոյ վերայազգային կեղրոնական Ապչութեան ուշադրութիւնը պիտի հրաւիրենք՝ ուրիշ բան չէ , եթէ ոչ մասնաւոր հսկողութեան մը ներքև ճգելով ընդարձակել այս մտակարարութիւնը , որպէս զի Ազգին ընդհանրութիւնն անկէ գալիք օդուտներն ըստ արժանւոյն վայելէ :

Ասն որոյ պիտի պարտաւորիմք այս խնդիրը փոքրինչ ընդարձակել , դէթ համառօտ բացատրութիւն մը տալու համար թէ ի՞նչ ինչ են այս խնդրոյն պակասութենէն առաջ եկած վսաներն , և ի՞նչ ինչ մեր առաջարկութեան ընդունելութենէն առաջ գալիք օդուտներն :

Տայց մեր բացատրութեանը չսկսած նշանակենք այս տեղնախ՝ մեր ընելիք առաջարկութեան համառօտութիւնը (վեր-

ջին ձգելով անոր վերաբերեալ մանրամաշ  
սըն ծանօթութիւնները), որպէս զի դիւ-  
րահասկանալի ըլլոյ մեր ընթէրցողաց :

Դիցուք թէ ամեն չայ իրեն մկրո-  
տուած օրը եկեղեցւոյ Սուրբ Սեղանին  
վրայէն (զինքը մկրտող քահանային միջ-  
նորդութեամբը) իւր ծննդեանն ու մկրո-  
տութեանը վաւերագիրն ընդունած, ու  
իբր սրբազան տետրակ մը իւր հետն առած  
ու իր ծնողաց տունը տարած ըլլայ, և  
այս տետրակին մէջ ծննդեան և մկրտու-  
թեան երկու ստորագրեալ և վաւերաց-  
եալ էջերէն զատ՝ գտնուի նաև ամուս-  
նութեան և վախճանման վաւերացուելիք  
երկու ձերմակ էջերն, ու նորածին ման-  
կան հետ ներկայանան առ ծնողս . ի՞նչ  
ազդեցութիւն յուսալու է ասկէ, որ պի-  
տի ընէ նոյն գերդաստանին ու ազգակա-  
նացը վրայ, որոնք հարկաւ տանը մէջ  
ժողվուած պիտի գտնուին : Այս բարո-  
յական ազդեցութիւնը ամեն մարդ իւր  
զգացմանց յարմարցընելով կրնայ մեկնել.  
ուստի և հարկ ալ չմնար մեզի այս խընդ-  
րոյն վրայով բացատրութիւն տալ : Այ-  
կայն սա պիտի հարցընենք թէ կայ այն-  
պիսի ծնողք, որ գոնէ հինգ դուրսուշ տալ

չուզէ այս ընդունած տետրակին համար ,  
մանաւանդ եթէ գիտնայ թէ Աղգային եւ<sup>1</sup>  
կամտից պիտի վերաբերի այն գումարը .  
չենք կրնար հաւատալ թէ այնպիսի ու-  
րախառիթ միջոցի մը մէջ , սիրով մանա-  
ւանդ մեծ փափաքավ ու գոհ սրտիւ չե-  
վճարէ այ ժողովուրդն այնպիսի փոք-  
րիկ գումար մը Աղգային գանձին և զւա-  
նայ . նոյնպէս գոհ և ուրախ սրտիւ պիտի  
վճարէ նաև քսան զուրուշ ամուսնու-  
թեան վաւերացմանը համար . նոյնպէս  
նաև վախճանման վաւերացման հինգ զու-  
րուշ , թէպէտ տխուր՝ բայց և այնպէս  
իբրև վերջին և սրբազն պարոք պիտի  
վճարեն ննջեցելոց ընտանիքը .

Դնենք ուրեմն առժամանակեայ ա-  
նուն մ'ալ այս տետրակին և անուանենք  
զայն Վաւերացման , ու գառնանք մեր խընդ-  
րոյն և տեսնենք թէ այս տետրակին պա-  
կասութենէն ի՞նչ մեծամեծ վնասներ ,  
սխալանք , փոքրկութիւնք և անպատեհ  
խնդիրներ ծագեր են մեր Աղգին մէջ .  
Բայց մենք չենք ուզեր այն բազմաթիւ  
վնասներն ու անպատեհութիւններն ալ  
այս տեղ առանձին առանձին նշանակել ,  
որ պատիւ չեն բերեր ոչ գլողին եւ ոչ

Ազգին . մեր վատիաքն է փոքր ինչ յիշա-  
տակութեամբ անցնիլ , այնպէս որ՝ մեր  
յիշատակութիւնը լոռութենէ ամենեւին  
տարբերութիւն չունենայ , և լինի այն-  
պէս որպէս թէ ոչինչ ասադաք :

ՎԱՍՏԱՐԱԿԻՆ · Օտար երկիր գացող հա-  
յերն աւելի զգացած են այս վաւերա-  
գիրքը չունենալուն վնասնելը . որովհե-  
տեւ մեր ծանօթներէն ալ շատերը տեսած  
ենք , որ նոյն պատճառաւ թէ՛ ժամանակ  
և թէ՛ դրամ վատնելէն յետոյ , իրենց ա-  
մենակարեւոր ուսմունքէն ետ մնացած ու  
վերջապէս պէտք եղածէն աւելի տարիներ  
ու ծախսեր զոհ ըրած են : Այս պան-  
դըստութեան մէջ կան այնպիսիք ալ , որ  
իրենց ծննդեան և մկրտութեան վկայա-  
գիրն հազիւ հազ ընդունած են առաջին  
քննութիւննին անցնելու համար , և անոր  
մէջը հայ հերձուուծ (առմէնիէն շիզմաթիք) նը-  
շանակուած ըլլալուն , պարտաւորած  
փոխել տալու համար քննութիւննին ետ  
ձգել : Այս այնպիսիք ես , որ իրենց աշ-  
խուժութեամբը բաղդի հանդիպած են ,  
այսինքն մեծամեծ գործեր առաջարկուած  
է իրենց , և այս վաւերագիրքը չունենալ  
լով կորուսած են զայն : Եսոյնպէս կան որ

օրինաւոր ժառանգութենէ՝ մը զրկուած  
են և օտարազգիք վայելած են իրենց ժա-  
ռանգութիւնը :

**ՍԻԱԼԱՆՔ.** Վացառութիւնները մէկ  
դի ձգելով, չդիտենք թէ ո՞րն է այն ա-  
յլ որ իրեն ծննդեան, մկրտութեան և  
ամուսնութեան թուականները կարենայ  
ծշդիւ զրուցել : Պօլսեցիք ընդհանրապէս  
ոմանք մեծ և փոքր շարժին, ոմանք մեծ  
կամ այն ինչ տեղի կրակին, ոմանք Առւլ-  
թանին թախտը ելնելուն, ոմանք քոլէ-  
ուային, ոմանք մահին և ոմանք պատերազ-  
մին, և այլն տարիներուն ծնած կամ ա-  
մուսնացած են : Վաւառացիք ալ, որը  
ֆիլին տարին, որը կարկտին, որը կարմիր  
անձրևին, որը մարախին, որը ոռոսին,  
որը կալին, որը մեծ ձիւնին, որը առիւ-  
ծին և որը եկեղեցին շինուած, և այլն  
տարիներուն ծնած են : Ասոնք և ասոնց  
նման են մեր ազգի վկայագրելն ընդհան-  
րապէս : Զկա՞ն արդեօք Պօլսոյ պանդրխ-  
առոց մէջ այնպիսիք, և շատ անդամտես-  
նաւած չէ՞ որ անձնական և խիստ կարե-  
ւոր խնդրոյ մը համար տան անգամ թըլ-  
թակցութիւն ընելէն յետոյ, խեղճին երկ-  
րէն ելած վաւերագիրը սխալնշանակաւե-

լուն համար, դարձեալ նոյն կարևոր խըն-  
դիրը ետ է մնացած և կամ բոլորովին չէ  
յաջողած. Թողունք այն անհամար կրկին  
ամուսնութիւններն որ խաբէութեամբ ե-  
ղած են, և նոյն պատճառաւ բազմաթիւ  
խեղճ քահանաներ յանիրաւի ամբաստան-  
ուած ու վերջապէս զոհ եղած են.

ՓՈՔՐԿՈՒԹԻՒՆՔ. Արովհետեւ. Նոր  
կազմուելիք դիւանատան վրայ չէ մերը  
սելիքը և անցեալին վրայ պիտի խօսինք,  
համառօտենք այս տեղերկու կտոր պատ-  
մութիւն, որոյ մին երևելի դաղղիացի՝  
հեղինակի մը և միւսը մեզի պատահած  
է. Աերոյիշեալ հեղինակն այստա-  
նի մէջ իւր ճանբորդութիւնն ըրած ատե-  
նը, հայաբնակ տեղերուն բնակչաց թիւը  
ծշութեամբ խմանալու համար մեծ դրժ-  
ւարութեան մէջ է ինկեր. Եկեղեցիւն իւր  
հաշիւը չդանելով, յոյն ալ կտրած՝ խելք  
ըրեր է այս ճանբորդն ու նախ խմացեր է  
մէկ մարդուն մէկ աւուր մէջ կերած հա-  
ցին քանակութիւնը, յետոյ ամեն մէկ հա-  
ցագործի մէկ աւուր մէջ ծախած հացին  
քանակութիւնը և յետոյ սկսեր է համ-  
ըն թէ այն քաղաքին կամ գիւղին մէջ  
ո՞ւշափ փուռ կայ. այս կերպիւ առաջին,

անդամներն իր հաշիւն ընելով՝ սկսել է  
բնակչաց թիւերը նշանակել. բայց վեր-  
ջերը նայեր է որ այն կերպիւ ալ ստոյգ-  
տեղեկութիւն չէ կրցած առնուլ. փասն  
զի տուներուն մեջ ալ փոեր կան. **Չենք**  
կարծեր որ այս հեղինակը մեծ բանի մը  
տեղ դրած ըլլայ մեր **Ազգը** յայսմմասին,  
և մեր նահապետական այս ընթացքին ալ  
հաւանած ըլլայ :

Փարիզի եւեւելի գաղղիացի խմբագ-  
րապետ մը մեզի յանձնարարութիւն ըրաւ  
1857ին, որ **Պոլիս** բնակող Հայոց թիւն  
իրեն հաղորդենք. բարեյիշատակ Յակով-  
բոս Արբազան Պատրիարք Հօր հաղոր-  
դեցինք այս խնդիրը. Արբազան Հայլն  
անոր կարեորութիւնն իմանալով թէպէտ  
ամեն ջանք ՚ի գործ դրաւ, բայց մեր մեկ-  
նելու ժամանակին խնդրոյն անհնարու-  
թիւնն իմացընելով՝ խոստացաւ դարձեալ  
աշխատիլ, և եթէ յաջողի՝ մեզի հաղոր-  
դել զայն. Փարիզ հասնելուս պէս այս  
երեւելի անձին գացինք և ՚ի սէր **Ազգին**  
քանի մը (սուտեր ըլսելու համար) անհի-  
մն պատճառներ ցոյց տալով ժամանակի  
ձգեցինք խնդիրը. **Անցեալ** տարի դարձ-  
եալ նորոգելով մեր խնդիրը հաղորդե-

յիւք Արբաղան Տեղապահ Նոր ՚ի ներ-  
 կայութեան մեծապատիւ Քարունակ պէ-  
 յի, որ իսկոյն կանչեց զարձանադրապետն  
 (կարծեօքս) և հարցուփորձէն յետոյ պատ-  
 ւիրեց որ Պօլսոյ բնակչաց թիւը հաւքէ  
 և մեզի տայ: Մեծապատիւ պէյին հարց  
 ուփորձէն և ընդունած պատասխաններէն  
 լաւ հասկըցուեցաւ որ գտնուած արձա-  
 նագրութիւններէն ալ սոոյզ հաշիւ մը  
 չպիտի կրնանք քաղեւ զանազան պատ-  
 ճառներու համար . . . այսու ամենայնիւ  
 մեծապատիւ պէյլ թէպէտ չմոռցաւ այս  
 խնդիրը, բայց ան ալ չյաջողեցաւ . ուս-  
 տի եւ մինչև ցարդ մեր անհիմն պատճառ-  
 ները շարունակելու վրայ ենք . տեսնենք  
 թէ վերջելնին ուր պիտի կայանայ: Մեր  
 գաղղիացի խմբագրին աչացն առջեւը այս  
 խնդիրն ալ աղգային փոքրկութիւն չհա-  
 մարելու համար, եփ աղէկ կաշի երեսու  
 նենալու է մարդս: Թաղողունք այն Աղջա-  
 յին փոքրկութիւնները զորս չյիշելու  
 խօսք ալ տուած էինք . բայց ինչե՞ր չպի-  
 տի ըսեր յայսմասին Ա օլնէյ եթէ իւր  
 ճանբորդութիւնը գրելէն դար մը ետքը  
 գերեզմանէն ելնէր ու Հայաստանի մեջ  
 ճանբորդէր: ԱՄԵՆՔ ալ փառք տանք որ

գաղղիացի խմբագրապետը մենէ միայն  
Պօլիս բնակող այոց գումարն ուզեց .  
վասն զի եթէ եկեղեցեաց , եպիսկոպո-  
տաց , վարդապետաց , քահանայից և սար-  
կաւադաց թիւերն ուզած ըրար , այն ատեն  
տեսնելու էր ոչ միայն մեր փոքրկութիւ-  
նը , այլ և խայտառակութիւնը . . . .

ԱՆՊԱՏԵՀՈՒԹԻՒՆՔ . Գրաւառները  
մէկդի թողլով՝ Պօլսոյ վրայ միայն խօսինք  
ու մէկ օրինակով մը հաստատենք այս  
խնդիրն ալ :

Օրինակի համար . (խնդիրնիս միշտ  
անցեալին վրայ է) երկու Վահանայ և  
քանի մը պատուաւոր անձինք ատենով  
Պատրիարքարանը գացած են , այս ինչ  
Պարօնը այն ինչ օրիորդին նշանելու հա-  
մար . ըստ եկեղեցական կանոնի , ցեղա-  
համարի խնդիրները Վահանաներէն ի-  
մացուելով և հաստատուելով , օրինաւո-  
րութեանը վրայ տարակոյս չէ մնացած .  
Պարօնին տարիքը հարցուած ատենը տա-  
ներէցը պատասխաներ է թէ 30 տարե-  
կան է . նոյն հարցումն եղած է օրիորդին  
տաներիցուն , նա ևս 20 տարեկան ըրած  
իւր օրիորդ ծուխն . Պատրիարքարանն ա-  
սոնց մէջ ապօրինաւորութիւն մը չտես-

նալով, մանաւանդ ներկայ քահանայից և  
միւս պատուաւոր անձանց վկայութեանը  
վստահելով, նշանտուքի և ամուսնու  
թեան հրամանը հարկաւ չմերժեր. Կա-  
նի մը օրէն կամ շաբաթէն յետոյ, նա-  
յիս որ սկարօնին մազերն ու մողուքը ճեր-  
մըկեր, վաթսունը վեցին է կոխեր, և օ-  
րիորդն ալ պղտիկցեր ու տասնը հինգին  
հազիւ հաղ է հասեր. Այս կերպ ամուս-  
նութիւնները Եկեղեցւոյ և Պատրիար-  
քարանին առջև ոչ միայն ապօրինաւոր՝  
այլ և աններելի մեղքի կարգ համարուած-  
են. բայց Պատրիարքարանն ի՞նչ յանցանք  
ունի այս տեղ. չէ՞ որ այս և ասոր նման  
բավմաթիւ անպատեհութիւնները վաւե-  
րագրքին և անոր վերաբերեալ մատակա-  
րարութեան պակասութենէն առաջ ե-  
կած են :

Ասոնք ու ասոնց նման աններելի սր-  
խարանք, փոքրկութիւնք, վնասներ և ան-  
պատեհութիւնք շատ եղած կան մեր Ազ-  
գին մէջ. և մեք հազարէն մէկը չըսինք,  
ինչպէս որ խոստացած ալ էինք. բայց  
յուսամք թէ այս խեղճութեանց վերջե-  
րուն հասանք. Ժամանակ է որ անցեալը  
ներկային օգուտ բերէ մեր Ազգին, և ա-

պագային մէջ օր ըստ օրէ ծաղկի նաև  
զարդանայ շնորհիւ ազգասէր Վարչու-  
թեան :

Հիմա դառնանք մեր առաջարկու-  
թեան , և տեսնենք թէ անոր ընդունե-  
լութենէն ի՞նչ օդուտներ պիտի ծագին :

Վեր խնդիրն երկու բանի պիտի նը-  
պաստէր , այսինքն՝ բարեկրթութեան եւ  
ազգային եկամտի . ուրեմն նախ բարե-  
կրթեան նպաստող խնդրոյն վրայ ճարա-  
կինք և տեսնենք թէ ի՞նչ ինչ կրնանք  
քաղել անկէ :

Չոր ու ցամաք վաւերագրի մը բա-  
րեկրթութիւն պիտի ըսէ մէկը . և ի՞նչ  
ելաւ ատկէ . ատիկա չկրնար ո՛չ այսոց  
կեանքն աւելցրնել , ո՛չ առեւտրոց դռներ  
բանալ , և ո՛չ տարեկան ծախքերն ա-  
ժանցընել . Դրաւ է . բայց առանց անոր  
ալ այդ վիճակին մէջ դարձեալ սլիտի գրա-  
նուին ամեն մարդ . իսկ այնպիսի վիճակ-  
ներ կան աշխարհիս մէջ , որ մարդիկ՝ ա-  
ռանց բացառութեան , այն վիճակներէն  
անպատճառ պիտի անցնին , և այն վաւե-  
րագիրը որ ամենաչնչին գումարով մը ձեռք  
ձգուած է , շատ անգամ անգին բանի տեղ  
կրնայ բռնել . ուր դնենք հապա այն դիւ-

բութիւններն ու ստուգութիւններն որ  
ամեն բարեկիրթ ազգաց պէս չայն ալ պի-  
տի վայելէ :

Չգենք այն դիւրութիւններն որ ա-  
մեն մորդ պիտի ունենայ իւր կենաց ըն-  
թացիցը մէջ, ո՞վ դիտէ և ո՞վ կրնայ գի-  
տել պարծենալ չայոց ազգին գոնէ-  
Տաճկաստանի բնակչաց ամբողջ թիւը :  
1849ին Գաղղիոյ Տռէս լրագրոյն մէջ մա-  
սրն առ մասն նշանակուած և ամենայն  
չայոց գումարը մինչև 4.182.000ի չափ  
ելած էր . ասկէց ուրիշ տեղեկութիւն մը  
չունինք . և մեզ այնպէս կը թուի, թէ  
Առուսաստանէն գուրս դժնուող չայոց  
գումարները , որ նշանակուած էին նոյն  
լրագրին մէջ , անոնք ալ կամ հացագործ-  
ներուն տումարէն և կամ անոնց նման  
հաւաքածոյներէ քաղուած են : Կարե-  
լի՞է որ Սահմանադրեալ ազգ մը այս նա-  
հապետական վիճակով գոհանայ :

Ենշուշտ Սահմանադրութիւնը իւր  
հիմնական սկզբանցը մէջ շատ բան պա-  
րունակելու է . բայց անոր 137 և 147 յօդ-  
ւածներուն մէջ ազգային ընդհանուր աշ-  
խարհագրութիւն մը չնշմարուիր , և նը-  
շանակուածները (անշուշտ ներկային հա-

մար) մի միայն ծնած՝ ամուսնացած եւ վախճանածներուն համար է . այս ոճով կարելի չէ մեր ազգին գումարով ջշդութեամբ իմանալ :

Յիշաւի մեր առաջարկութիւնն ալ նորածին մանկանց համար է միայն , բայց ովքչիավաքիր որ Ա արչութիւնը Եզրային աշխարհագրութիւն մըն ալ ընէ . մեր համոզումն այն է որ այն խնդիրն ալ պիտի դիւրանայ երբ մեր առաջարկութիւնը ընդունուի և անոր մատակարարութիւնը ըստ արժանուոյն դիւրին և հիմնաւոր կերպիւ տնօրինուի : Չենք ուզեր մեր խընդրոյն գառնալ՝ առանց մեծապատիւ Ա արչութեան ուշագրութիւնն այս կարևոր խնդրոյն վրայ հրաւիրելու :

Տաճկաստանի ՞այր , ուր որ գտնըուի , իրեն տարիքը , ի՞նչ կրօնք ունենալը , ամուսնացեալ ըլլալը կամ չըլլալը , կամ թէ իւր ամուսնոյն ողջ կամ վախճանած ըլլալը , ո՞ր գաւառէն , քաղաքէն կամ գիւղէն ըլլալը պիտի կարենայ ներկայացընել այս տետրակով . չեմք կարծեր որ պարկեշտ ՞այս մը օգտակար չըլլայ այս վաւերագիրքը որ պաշտօնական ստորագրութիւններով զարդարուած է . Ուր թո-

ղունք այն Ազգային պաշտօնատեղերը ,  
ուր այս աետը մեծ զէնքի տեղ պիտի  
գործածուի , ու պիտի աղատին այն անպար-  
կեշտ ու խարերայ մարդիկներէն , որ ան-  
դադար ոչ միայն Ս. Եկեղեցւոյ օրինացը  
դէմգործած են , այլ և թէ՛ իրենց կրօն-  
քը , թէ՛ Առաջնորդարանները , թէ՛ Պատ-  
րիարքարանը և թէ ամբողջ Հայոց ազգը  
նուաստացընելու Ճանքաներ բռնած ու  
վնասներ հասուցած են անոնց : Դրսենք  
այն անհամար մեղօք ամուսնութիւնները՝  
որ Եկեղեցին արդիլած ըլլալուն համար  
մեր ամենուս պարտքն է սրբապղծութիւն  
համարիլ :

Այս ըսածներնուս ալ յոյտնի է որ մեր  
առաջարկութեան նպատակը խիստ ըն-  
դարձակ է ամենայն մասամբ . և թէպէտ  
ամեն ճիւղերու պէս այս խնդրոյն կեղրո-  
նատեղին ալ Պատրիարքարանի Դիւա-  
նատունն է , բայց այս խնդրոյն մէջ մաս-  
նաւոր դիտելու արժանի կէտն այն է , որ  
ոչ միայն Պատրիարքարանը ասոր պակա-  
սութեանը պատճառաւ գաւառներուն  
մէջ ծագած անլուծանելի խնդիրներէն պի-  
տի աղատի ու թեթևայ , այլ ամեն դա-  
ւառի մէջ գտնուած Առաջնորդարաննե-

ըրն ոլ պիտի ազատին ու շունչ առնեն,  
 և իրենց հսկողութիւնը աւելի օդտակար  
 նիւթերու վրայ դարձընեն, և հետևա-  
 բար ի՞նչ կարգ կամ ընթացք որ տնօ-  
 րինուի Պատրիարքարանին մէջ յայսմ մա-  
 սին, նոյն ընթացքը պիտի բռնեն նաև ա-  
 մեն տեղ: Ըստ է որ Պատրիարքարան ն-  
 այս մատակարարութեան մեջենայի բանա-  
 լին իւր ձեռքն ունի, և բանեցընելուն ա-  
 տեն ինչ գործողութիւն որ ըլլայ՝ պիտի  
 տեսնայ ամեն տեղ: Եղափի մը մէջ այս  
 կերպ համահաւասար ընթացք մը արհա-  
 մարհանաց արժանի չէ: Եւ որովհետեւ  
 այս տետրակները տպեալ և կնքով վա-  
 ւերացեալ (ինչպէս որ վարը պիտի բա-  
 ցատրենք) Պատրիարքարանին պիտի զըր-  
 կուին ամեն գաւառներուն, ընթերցողը  
 կրնայ երեւակայել թէ ի՞նչ գեղեցիկ և  
 ո՛րչափ օդտակար գործողութիւն մը պիտի  
 ըլլայ այս ազգին մէջ, որ զուրկ մնացած է  
 բոլորովին այս կերպ մատակարարութիւն-  
 ներէ: Եւրոպացիք այսպիսի ընթացքնե-  
 րը չեն արհամարհեր, քանի որ իրենց ար-  
 դի վիճակին առաջին քայլերն այսպիսեաց  
 մէջ առած են: և անոնց մեծամեծ օ-  
 դուտները քաղելով, վաղուց ՚ի վեր կա-

ըեռութիւննին ալ ճանչած են : Եւ ա  
հա այս պատճառներով մեղի անհաւա-  
տալի թուած է ու չեմք կրնար հաւատալ,  
որ մեծապատիւ **Ա** արչութիւնն արհա-  
մարհէ և զրկել ուզէ զԱզգն այս բարե-  
կիրթ շնորհքէն :

**Չ**ենք ուզեր երկարել այս խնդիրը.  
Չենք ուզեր նաև վախճանման վկայագրին  
հարկաւորութեան վրայ ևս խօսիլ առ  
այժմ, վասն զի **Ազգն** ալ անոր կարեւո-  
րութիւնը դեռ չուզեր իմանալ : **Դ**առ-  
նանք ուրեմն եկամտի խնդրոյն :

**Մ**ինչև ցայժմ տյնպիսի եկամուտ մը  
չեմք ունեցած որ **Ազգին** ընդհանրու-  
թեանը պատկանի, թէ՝ տնօրէնութեամբ  
և թէ մատակարարութեամբ : Թռէպէտ-  
ամեն տեղ **Ազգային** հասոյթներ կան, բայց  
ամեն տեղինը իրեն համար է, նման այն  
**Ազգային** հաստատութեանց հասոյթնե-  
րուն՝ որոց ամենն ալ առանձին տնօրէ-  
նութեան առկ են, և ընդհանրութեան  
մատակարարութիւն չեն կրնար ընել, ինչ-  
պէս որ ընդհանրութիւնն ալ անոնցմով  
չկրնար բաւականանալ :

**Ա**յս հասոյթներուն նկատմամբ մեր  
**Ազգին** սխալանքը, մանաւանդ յանցանքն

այն է եղած, որ ժամանակ առ ժամանակ  
իրեն յոյսը բոլորովին հաստատութեանց  
հասոյթներուն վրայ դնելով անփոյթ է մը.  
նացեր և ընդհանուրին օգուտ մը ընելու  
համար գլխուն ձարը չէ տեսեր . ցաւա-  
լի' կացութիւն . բայց անցելոյն վրայ վե-  
ճելն ու ցաւին ի՞նչ օգուտ կրնայ ընել,  
եթէ կենալ ուզենք դարձեալ նոյն իսկ  
կացութեան մէջ ու ձար մը չմտածենք :

**Այո'**, ամեն անկատարելի յոյսելմուու  
վէճելը մէկդի ձգելով՝ գլխունուս ձարը  
պէտք է տեսնել, եթէ չենք ուզեր ամեն  
բանէ զրկուիլ ու վերջապէս կորսուիլ .

**Ամեն** բանէ զրկուիլ, ըօխնք, վասնզի  
մեծ վախ ունիմք որ չըլայթէ Սահմա-  
նադրութիւնն զմեզ այնպիսի վիճակի մէջ  
դնէ, որ երբեմն երբեմն մեր ընդունած  
**Ազգային** շնորհքներէն ալ զրկուինք . ո-  
րովհետեւ այն բաները որ առաջ կային,  
հիմա չկան . ուստի մեզի պէտք է ձարել  
այժմ և ունենալ այն բաներն որ առաջ  
չկային : **Արժան** չէ և ոչ վայելուչ, ար-  
համարհել այն առատածեռնութիւնները,  
որ մեր **Ազգը** վայելած է մեծատանց կող-  
մանէ : **Ասած** ենք ու վիտցողներն ալ շատ  
են, թէ **Ազգային** որ և իցէ ինդրոյ մը

Համար, շատ անդամ՝ քանի մը մեծատուն  
անձինք՝ մէկ ժամու մէջ հարիւր և մին-  
չև հինգ հարիւր հազար դուրս իրենց  
մէջ ժողոված և նոյն խնդրոյն համարնուի-  
րած են Աղգին. չենք կրնար այսպիսի  
նուելները մեծատան կամ Կմիրայի կող-  
մանէ գալերնուն համար արհամարհելու նորա-  
ծին սկզբանց ոչ ծառայած ունիմք և ոչ  
ալ անոր հետեւելու միտք. մեր սկզբուն-  
քէն դուրս է նուելնը նուիրողին կոնակը  
տալ և հոգնած բեռնակրի նմանցընել.  
Այս ըսածներնիս ալ անոնց հետ ձգենք  
որ առաջ կային ու հիմա չկան, և հե-  
տեւինք այն բաներուն կամ առ այժմ ա-  
նոնց մէկին, որ թէպէտ առաջ չկար,  
բայց Սահմանադրական Վարչութիւն մը  
կարող է մեղի տալ.

Եկամուտ մը կամ գանձ մը, ըսինք.  
որ Աղգին ընդհանրութեան պատկանի.  
Մեր առաջարկութեան մէջ ելեմտից հա-  
շիւ տալը մեզի չպատկանիր. քանի որ գեռ  
մուտքը չունինք. Ապահով եմք որ Վար-  
չութիւնն ըստ արժանւոյն պիտի տնօրի-  
նէ անոր մատակարարութիւնը և անով  
պիտի զարգացընէ զԱղգն ՚ի մասին բարե-

**Կըրթութեան.** ըսել է որ մեր խնդիրը մի  
միայն մուտքին վրայ պիտի ըլլոյ : Աշխե  
ընենք ուրեմն մեր առաջարկած վաւերա  
գրոքին եկամուտը, նշանակելով նախ ամեն  
մէկ վաւերականութեան առաջին, երկ  
րորդ և երրորդ կարգի գները :

**Վաւերականութիւն ծննդեան և  
մկրտութեան**

<b>Ըռաջին կարգ</b>	<b>Դուրուշ</b>	<b>20</b>
<b>Երկրորդ</b> "	"	<b>10</b>
<b>Երրորդ</b> "	"	<b>5</b>

**Վաւերականութիւն ամուսնութեան**

<b>Ըռաջին կարգ</b>	<b>Դուրուշ</b>	<b>100</b>
<b>Երկրորդ</b> "	"	<b>50</b>
<b>Երրորդ</b> "	"	<b>25</b>

**Վաւերականութիւն վախճանման**

<b>Ըռաջին կարգ</b>	<b>Դուրուշ</b>	<b>20</b>
<b>Երկրորդ</b> "	"	<b>10</b>
<b>Երրորդ</b> "	"	<b>5</b>

**Ըստ ըսել է որ Ըզդին ամեն մէկ ան  
հատը (եթէ չամուսնացած շվախճանի)  
պիտի վճարէ յայսմ մասին կամ 140 դու-  
րուշ, կամ 70 դուրուշ և կամ 35 դու-  
րուշ բոլոր կենացը մէջ : Ըսիկայ մեծ  
բան մը չէ և զօկուիլը չարժել :**

Մեր Ազգին միշտ թիւը չենք գիտեր,  
բայց մինչև ցայժմ եղած հաշիւներէն  
յայտնի է, որ չորս միլիոնէն աւելի է պաշտօնական չէ :

Դնենք ուրեմն Հաճկաստանի հայոց  
համար միայն 3.000.000 : Եյս հաւանական գումարին վրայ դնենք մէկ տարուան համար 30էն 1 ծնունդ որ պիտի ընէ 100.000 ծնունդ :

**Ծանդոց հարիւրէն տասը 10.000  
Եմուսնութիւն .**

**Ծանդոց հարիւրին եօթանասունը հինգ 75.000 փախճանումն :**

Բաժնենք աստիճանաց կարգն ալ այսպէս :

Առաջին կարգ հարիւրին	5	Հարուստ
Երկրորդ " "	30	միջակ
Երրորդ " "	65	հասարակ
Եւ այս ոճով հաշիւնիս ընենք .		

### Հաշիւ ծննդոց

	թիւ	դրա.	գումար
Ա . կարգի ծնունդք	5000	20	100000
Բ . " "	30000	10	300000
Գ . " "	65000	5	325000
Դառմար	100000		725000

## Հաշիւ ամուսնութեանց

			թիւ	դրչ.	գումար
Ա.	կարգի ամուսնութիւնք	500	100	100000	
Բ.	"	"	3000	50	300000
Գ.	"	"	6500	25	325000
					<hr/>
	Գումար	"	10000		725000

## Հաշիւ վախճանմանց

			թիւ	դրչ.	գումար
Ա.	կարգի վախճանմունք	3750	20	75000	
Բ.	"	"	22500	10	225000
Գ.	"	"	48750	5	243750
					<hr/>
	Գումար		75000		543750

Եյս հաշւոյն մէջ ամուսնութեան գումարները կրկնած ենք, այն պատճառաւ որ յերկողունց կողմանց ալ, այսինքն թէ՛ փեսին և թէ՛ հարսին կողմանէ պիտի վճարուին յիշեալ գումարները՝ աւաբեմք այժմ այս երեք մեծ գումարները՝

Վասն ծննդոց և մկրտութեանց	725000
" ամուսնութեանց	725000
" Վախճանմանց	543750
	<hr/>
	1993750

Մէկ միլիոն ինն հարիւր իննսուն երեք հազար եօթը հարիւր յիսուն դու-

բուշ ընդամենը :

Եյս հաշիւր որչափ որ հաւանական գրութեամբ նշանակած ենք այս տեղ, մեր համոզումն ալ այն է որ կարելի է ասկեց աւելի ըլլայ քան թէ պակաս, և չենք կը քար համոզուիլ մինչեւ որ Ազգի որքանութեան հիմնաւոր գումարը չտեսնենք :

Բայց այս գումարին վրայ զեղչ մը կայ որ ազգային Ավելքոնական գանձը պիտի ընէ թէ՛ Պօլսոյ և թէ՛ դաւառաց եկեղեցիներուն, որպէս զի անոնք ալ իրենց մասնաւոր բաժինն ունենան յայսմ մասին . և այս զեղչին վայելուն ալ հարիւրին 25 կարծած ենք, ուստի բառնանք այս 1993750 դուրուշէն

0/0 25 498437 50 "

1495312 50 դուրուշ

Մէկ միլիոն չորս հարիւր ինըսունը հինգ հազար երեք հարիւր տասն երկուք ու կէս զուրուշ պիտի մնայ, իբրև մուտք Ավելքոնական գանձին :

Չը մոռնանք ըսելու թէ վաւերագիրը առաջին կարգէն ալ առաջին, երկու կարգ ևս պիտի ունենայ ամենափակազմ, մին ամենահարստից և միւսն

Հարստագունից համար , և պիտի վճարեն ,  
Ամենահարուսաները | Հարստագոյները

	ԴՐ.		ԴՐ.
Վասն ծննդ .	1000	Վասն ծննդ .	500
" ամուս .	5000	" ամուս .	2500
" վախճան .	1500	" վախճան .	750

Եսոնց գումարներն ալ վերիններուն  
փռայ պիտի աւելիան . իսկ մենք այժմ չենք  
ուզեր մանրամասն բացատրութիւն տալ  
ասոր փռայ :

### ՎԱԻԵՐԱԳՐՔԻՆ ՈՃՆ ՈՒ ՕՐԻՆԱԿԸ

Վաւերագիրքը տետրակաձև պիտի  
ըլլայ , յորում պիտի պարունակին չորս  
թերթ կամ ութ էջ , և պիտի ունենայ  
երեք տեսակ կազմ , առաջին , երկրորդ և  
երրորդ :

Եռաջին և երկրորդ էջերուն մեջ  
պիտի տպուին այս խնդրոյն օրէնքները ,  
մատակարարութեան կանոններն ու կեր-  
պերը :

### ՎԱՍՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

Էջ 5 եւ 4

Յորում պիտի նշանակուին (ամեն ա-  
նուն իւր տեղն ունի) նորածին մանկան

Հօրը և մօրը մականուններն ու անունները, ծնած տեղը (գաւառ, քաղաք կամ գիւղ և թաղ) նորածին մանկան մականունը, ծննդեան թուականը, ամիսը և օրը, և ասոնց ներքելը թաղական կնիքով պիտի հաստատուին։ Եւ դարձեալ մկրտուած Եկեղեցւոյն, քահանային և կրն քահօրն անունները, նոյնպէս և մանկան հօրը, մօրը և իւրացեալ մականունն ու մկրտման անունը, և դարձեալ մկրտութեան թուականը, և այն։ Եւ ասոնց տակը պիտի դրուին հոգեւոր առաջնորդին, աւագ քահանային, մկրտող քահանային ու կնքահօրն ստորագրութիւններն ըստ կարգին։ Ասոնց ամենուն ներքելը, այսինքն Եջերուն վարի կողմերը, Պատրիարքական վաւերակնիքն արդէն դրուած է, և ասոնք պիտի ըլլան ծննդեան և մկրտութեան վաւերագիր։

### ՎԱՄՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

#### Էջ 5 եւ 6

Ուր պիտի նշանակուին փեսին եւ հարսին անուններն ու տարիքները, նոցապսակուած տեղը, Եկեղեցւոյն, պսակող քահանային և կնքահօրն անունները։

նոյնպէս և թուական եւայլն , եւայլն . և  
յետոյ սոռրագրութիւնք ըստ կարգին :  
Այս դործողութիւնները թէ՛ փեսին և  
թէ՛ հարսին վաւերագրերուն մէջ կրկնա-  
կի պիտի նշանակուին , և այս ամուսնու-  
թեան վաւերագրիրը պիտի յանձնուի եր-  
կուքին :

### ՎԱՄ ՎԱԽԱՆՄԱՆ

Էջ 7 եւ 8

Յորում պիտի նշանակուին ննջեցե-  
լոյն մականունն ու անունը , նորա տարիքը ,  
վախճանած տեղը , բնական կամ ի՞նչ և  
իցէ հիւանդութեամբ մեռնիլն ու թաղ-  
ուած գերեզմանը , որ և պիտի յանձնուի  
այս վախճանման վկայագիրն ալ ննջեցե-  
լոյն լնտանեացը :

Վաւերագրին ցրուումը եւ մատակարա-  
րութիւնը Պօլսոյ եւ գաւառաց մէջ :

Պօլսոյ համար , Պատրիարքարանը պի-  
տի զրկէ այս տետրակէնամեն թաղերուն ,  
կամ անոնց դրամները (0/0 25 զեղչով )  
կանխիկ ընդունելով եկեղեցիներէն , և կամ  
պլ ո՛ր և իցէ կերպիւ որ կամի . անոր  
համար աւելորդ է խօսիլն աստ :

Խակ գաւառներուն զրկուելիքները  
պէտք է ուղղել գաւառագլուխ քաղաք  
ներուն և համարը կամ հաշիւն անոնցմէ  
պահանջել միշտ 0/0 25 զեղչով :

Գաւառագլուխ քաղաքներն այս տետ  
րակները Պատրիարքարանէն ընդունելով՝  
պիտի զրկեն զանոնք իրենց վիճակաց բո  
լոր գիւղերուն, նոյն խոկ ոճով ինչպէս որ  
Պատրիարքարանը պիտի զրկէ Պօլսոյ բոլոր  
թաղերուն . միայն թէ յիշեալ քաղաքնե  
րը 0/0 20էն աւելի զեղչ չպիտի ընեն  
գիւղերուն համար, որպէս զի նոյն մա  
տակարարութեան պատճառանօք աւելի  
ծախս չծանրանայ քաղաքաց վրայ :

Եւելորդ է կրկին յիշելն աստ, որ այս  
վաւերագիրը եկեղեցւոյ սաւրը Սեղանէն  
պիտի ընդունի նորածին մանուկը, միջ  
նորդութեամք զինքը մկրտով քահանային .  
Երանի՛ թէ քերականի ոճով ընթերցա  
րանիկ մ'ալ տրուել մանկան այս կերպիւ,  
որով ընթերցանութիւնն ալ սրբազնանար  
ու բարոյական զօրութիւն մը ձգէր մեր  
Ըզգին մէջ : . . . .

Խակ մեր առաջարկութեան բունըս  
կըզբունքին դալով, անհնարութիւն մը  
չենք տեսներ մատակարելու մասին . բա

ւական է որ ամենապատիւ Արքազան  
Պատրիարք չ'օր և Աթեղրոնական Վար-  
չութեան մեծապատիւ Ենդամոց ու-  
շադրութեանն արժանանայ մեր խնդիրը,  
որ կրնայ (ինչպէս ըսինք) առաջնորդել  
երկրորդ և երրորդներու , զորս սոյնպէս  
ազգին ընդհանութեանը դանձին նպաս-  
տող խնդիրներ համարած ենք , ու այս  
առաջինն ալ իբրև փորձաքար առաջար-  
կած ենք :

Յոյս ունինք որ մեր ձայնը պիտի ըս-  
ուի , վասն զի չկայ հայ մը որ եկամուխց  
կարօտ ըլլալը չզգայ . բաւական է որ մեր  
ազգին հօգևոր և մարմնաւոր առաջնորդ-  
ները ժողովութեան զգացումը ճանչեն ու  
ըստ այնմ սկսին մատակարարել ազգին  
վերաբերեալ խնդիրները , վասն զի ամե-  
նայն խնդրոց անյաջողութեանց սկզբնա-  
պատճառներն ազգին բարոյական զգացու-  
մը չճանչնալէն առաջ եկած են :

Դրամ ժողվելու համար մեր մեծ  
սխալանաց մէկն ալ այն է , որ մենք մեր  
Եզրն ուրիշ ազատ կամ հպատակ ազ-  
գաց կարգն համարելով , մուշքերնիս դրած  
ենք որ այլ և այլ ազգաց ոճովս կարող  
ենք մերազնէիցմէ ալնոյն դրամը ժողովե-

լով մեր կարօտութիւնը լեցընել. յիմա  
 բութիւն և ծաղրելի կարծիք . . . զի եր  
 բէք չպիտի կարողանայ մէկը՝ ո՛չ Պատ  
 րիալք, ո՛չ Անդրոնական Վարչութիւն  
 և ո՛չ այլու իցէ ազդեցութիւն ունեցող  
 անձ մը նոյն կերպիւ գրամհաւաքել,  
 երբոր իւր ընթացքը այլ և այլ ազդաց  
 պէս հայրենասիրութեան վրայ հիմնէ. Եր  
 բէք ըստնիք, վասն զի ստուգիւ գիտենք և  
 հիմնաւոր ապացոյցներով համոզուած ենք  
 որ (բայցառութիւնը մէկ դի) Հայոց ընդ-  
 հանրութիւնը հայրենասիրական առա-  
 քինութիւն չէ ունեցած, չունի և չպիտի  
 ունենայ մինչև որ ժամանակը չգայ. չեն  
 ունեցած, չունին և չպիտի ունենան նաև  
 անոնք, որը շատ անգամ ցաւած ու  
 կոծած են Հայուն այս հայրենասիրական  
 գգացման պակասութեանը վրայ, առանց  
 մոռնալու այն պարծանիքն ու գոհունա-  
 կութիւնն ալ որ իրենք ուրիշներուն պէս  
 չեն. ափսո՞ս, ասոնք ալ տեսան մեր աչ-  
 քը, մանաւանդ այն ատեն՝ որ 'ի հարկէ  
 ստիպեալ մասնաւոր ու ամենափափուկ  
 հայրենասիրական խնդրոյ մը մէջ անձամբ  
 գտնուեցանք, և նոյն խնդրոյն մէջ մեծ  
 զարմանքով տեսանք, որ ամենայն դրա-

մական ծանրութիւնը մեր վրայ ոչ միայն  
ձգեցին մինչև ցարդ , այլ և . . . , Բայց  
ձգենք այժմ այս խնդիրը և սպասենք այն  
աւուր , որ պիտի ստիպէ զմեզ հաւատա-  
րիմ պատմութիւնն ընել ՚ի զարմանս և  
՚ի զդաստութիւն ամենեցուն . այսչափն  
ըսե՞նիս ալ ուրիշ մտօք չէ , եթէ ոչ հաս-  
տատել ։ այուն հայրենասիրական առա-  
քինութիւն չունենալը . ուստի չունի ը-  
սինք արդի ։ այն հայրենասիրական ա-  
ռաքինութիւն և ձգեցինք . Թռող մէկն  
ենէ ու մեր հիմնաւոր ապացոյցներն՝ ե-  
թէ կարող է՝ եղծանէ , երանի՛ թէ յաղ-  
թուէինք ու մեր փափաքն ալ կատարէր :

Թռէպէտ հայրենասիրական առաքի-  
նութենէ բոլորովին զուրկ է ըսինք ։ այր ,  
սակայն անոր կրօնական առաքինութիւնը  
և նոյն զդացմամբ ունեցած վեհանձնու-  
թիւնն ու առատաձեռնութիւնը չենք  
կրնար ուրանալ , և այս կողմանէ պարտա-  
ւոր ենք հաւատալու որ շատերէն ալ ետ  
չմնար . Ուստի խելացաւթիւնն այն է որ  
ամեն ազգ իւր ավնիւ յատկութիւնն ու-  
նի ըսելով , Ա արչութիւնը նոյն յատկու-  
թենէն օդուելու համար , հայուն հաճելի  
երեցած կերպիւր անօրինէ խնդիրները .

այն է յաջողելու սկզբունքը , որ անյաջութեան տեղը պիտի բռնէ , եթէ ոչ՝ զուր պիտի ենեն ամենայն ջանք և աշխատութիւնք :

**Ա**հաւասիկ աղդ մը և անոր կացութիւնը որ ուրիշ աղդաց չնմանիր . և եթէ **Ա**րչութիւնը բաւական համարի արդի գտնուած աղդային հարստութեանց հասոյթները , մենք ալ չենք կրնար համոզւիլ թէ այդ հին կերպիւ կարենայ քաղել այն օգուտներն՝ որոց վրայ գարերէն՝ ՚ի վեր յոյս ունէինք . թո՛ղ որ անոնց ամենը թէպէտ աղդային , բայց ասանն ալ առանձին առանձին աղդային ժողովութեներ և **Տէրեր** ունին . ի՞նչպէս կարելի է **Ա**րչութեան՝ այնչափ եկամուտ ըսպասել անոնցմէ , որով կարենայ ընդհանուրին զարդացմանը մատակարարութիւն ընել : **Ո**չ , աղդին այժմեան վիճակին պահանջածն անյուսալի խնդիրներ չեն . անոր պահանջածն այն է որ աղդային **Ա**րչութիւնը բարեհածի **Ա**զգին կարօտութիւնն զգալ , ու ճար մը գտնել անոր նպաստելու , և այն ալ հաստատութեանց հասոյթներով չէ եղել և չըլար , այլ մասնաւոր սկզբանց վրայ հիմնեալ , անորին .

եալ և հաստատեալ եկամուտով . եթէ  
ոչ , ժողովուրդն իրաւունք պիտի ունենայ  
երեսը դեպ 'ի հին վիճակին դարձնելով ]  
այս խօսքերն ալ այն հնանոր սկզբանցն  
ուղղելու և ըսելու .

“Մնաք բարով հնացեալ և զառամ  
եալ սկզբունք , զի նորոգութեան հիւթ  
չտեսանք և չպիտի տեսնենք ձեր վրայ :  
Մնաք բարով Սահմանադրութիւն եւ  
հաստատութիւնք անհասոյթք , որ մեր  
վիճակը փոխանակ բարելաւցընելու՝ աւել  
լի եւս պիտի դառնացընէք : Մնաք բար  
ով . այսուհետեւ ձեզի հետ ոչ գործ ու  
նինք և ոչ իսկ յոյս ձեր վրայ , զի լաւ է  
անցեալով պարծենալ քան ներկայիւծադ  
րելի ըլլալ . . . : ”

Դայց ինչո՞ւ պիտի ըսել տայ Ա ար  
չութիւնն այս խօսքերը ժողովադեան եւ  
ինչո՞ւ պիտի ըսե ժողովուրդն ալ . մի թէ  
մեր Ըզդին կացութիւնը բաւական թըշ  
ւառութիւն չէ՞ համարուած մինչեւ ցարդ ,  
և անոր համար չէ՞ որ ժողովուրդն ալ  
իւր խղճութիւնն ու անկարողութիւնը  
զգալով իւր գործերը քուեիւն յանձնած  
է այն անձանց՝ որոց վրայ բաւական վրա  
տահութիւն ունէր :

Ուրեմն ժողովրդեան պահանջածն ու  
խնդիրն ուրիշ բան չէ այժմ, եթէ ոչ  
հսկողութիւն իւր գործերուն, գթու-  
թիւն, կարեկցութիւն և մանաւանդ կա-  
րեկցութիւն, և այս կարեկցութիւնը  
Վարչութեան բուն իսկ բարոյական և  
սրբազն պարտքն է Աստուծոյ, Տէրու-  
թեան և Աղջին առջեւ :

Վարեկցութիւն ըսինք ու սրտերնուս  
խոռվութենէն աչքերնիս այլայլեցաւ . . .  
վասն զի զգացինք որ մեր Աղջին ուրիշ ա-  
մենէն ստորին ազգաց հետ անդամերեք  
չպիտի կարենանք բաղդատել, ոչ բարո-  
յապէս և ոչ նիւթապէս . և որ ցաւալին  
է՝ չայը իւր վիճակն ինքը չզգար, որ ամե-  
նէն յետին և ստորին ազգերէն ալ խեղճ ու  
ամենաթշուառ գտած ենք մեր տեսու-  
թեամբն ըստ ամենայնի, և այս այնապիսի  
Ճշմարտութիւն մ'է, որ ո՛չ կարելի է ու-  
րանալ և ո՛չ հնարաւոր է քողարկել . և  
եթէ ընթերցասիրութիւնը ազգի մը գրտ-  
նուած աստիճանին փորձաքարն ըլլալուն  
լաւ համոզուած ենք, «Ասարը Գրայսէրի-  
յէ » անուն տետրակին նկարադրութիւնը  
մէկ ձեռքերնիս և Ասհմանադրութիւնը  
միւս ձեռքերնիս առած, ամենէն ստորին

ազգին դիմացը ո՞չ կարմրելով և ո՞չ ալ  
դեղնելով կարող ենք ելնել . . . վասն զի  
միլիոններով բաղկացեալ ազգ մը կամ  
80 օրինակ գրքով բարոյապէս չկրնար  
ապրիլ, կամ Աահմանադրութիւնն անոր  
ձեռքն Խաչոք խաղալէք մ'է, և կամ այս  
ազգն ստուգիւ և իրապէս մահուան դըռ-  
նելն հասած է : Տեսա՞ր հիմա, սրամիտ  
ընթերցող, քու ազգիդ վիճակը, և հաւա-  
տացի՞լ: մեզի հետ որ այս զարհուրելի վի-  
ճակին սկզբնապատճառը եկամտից պա-  
կառութիւնն է, և իմացա՞ր հիմա մեր ե-  
կամուտ ճարելու բուն նպատակը և անոր  
ինչ ինչ տեղ գործածելուն փափաքը :

Կարեկցութիւն ուրեմն մեծապա-  
տիւ Ա արքութիւն, կարեկցութիւն վա-  
սրն Ազգիս Հայոց . զի ահաւասիկ Ազգ  
ը որ ստուգիւ և իրօք հիւանդ և ամե-  
նածանը հիւանդ ու ձեզի յանձնուած է,  
և դուք բժիշկներու նման՝ համարեցէք  
թէ անոր կասկածելի կացութեանը հա-  
մար խոլհրդակցութեան կանչուած էք,

այս հիւանդ Ազգին դարմանը ձենէ պի-  
տի պահանջուի և յուսացուի : Հայ ժո-  
ղովուրդը պիտի սպասէ այդ դարմանին և  
պիտի սպասէ երկայնմտութեամբ մինչեւ

այն ատեն, որ Համազուի վերջապէս թէ  
դուք ևս իրեն պէս հիւանդ ու խորհրդակ-  
ցութեան (քօնսիւթասիօն) կարօտ էք ե-  
ղել, և այն ատենն է միայն որ յոյսը  
պիտի կարէ ձենէ :

Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ :

**Չեզի** գրեցի այս առաջարկութեանս  
տողելը, **Արբազան** Հայր պատուական,  
**Չեզի** որ մանկութեանս ատենի դասակ-  
ցացս հետ **Չեր** ուսունասէր հոգասա-  
րութիւնը վայելելու շնորհն ունեցած եմ,  
**Չեզի**, որ առաջին արծարծողն եղած էք  
այն ողւոյն՝ զոր այժմկրեմ.

Եցէ՛ թէ խընդիրս ալ **Չեր** ուշադ-  
րութեանն արժանանար :

**Չեզի** ևս գրեցի, մեծապատիւ **Ըն-**  
դամքէ Աւեղրոնական **Վ**արչութեան, որ  
Կ**Չեզ** թէպէտ չընտրեցի, բայց սրտիւ  
ընտրողաց հետ պիտի ըլլամ, եթէ դուք  
ևս ուզէք ընդունիլ զԵզգը ձեր սրտին  
մէջ ու գթալ անոր կացութեանը վրայ,  
որպէս Հայր իւրում որդւոյ :

**Եղգին** սանձն այժմ ձեռ ու ընիդ ու  
նենալով կարողութիւն ևս ունիք ուզդել

զնա դեպ ՚ի զարդացումն կամ ՚ի կործանումն : Գիտնաբ որ Աստուծոյ ու Ազգին աչքը ձեր վրան է . ուստի ձեր պառւլներէն դատուելով հատուցումնիդ ալ պիտի ընդունիք ըստ արժանաւորութեան ձերում :

14 դեկտ . 1865

ՃԱՆԻԿ Ս . ԱՐԱՄԵԱՆ :

Կ . Պօլիս









